



ԶԱՎԵՆ ԱՎԵՏԻՍՅԱԼ

ՀԵՌԱՅՈՂ ՀՈՐԻՉՈՆՆԵՐ

(հուշեր)

ԵՐԵՎԱՆ



2017

ՀՏԴ 821.19-94 Ավետիսյան

ԳՄԴ 84 (5Հ) - 4

Ա 791

**Հրատարակվել է ՀՀ ԳԱԱ Մանուկ Աբեղյանի անվան
գրականության ինստիտուտի աջակցությամբ**

Խմբագիր՝ Արմեն Ավանեսյան

Ավետիսյան Ջավեն

Ա 791 Հեռացող հորիզոններ: Հուշեր / Ջ. Ավետիսյան. - Եր.:

Արմավ, 2017. - 216 էջ:

ՀՏԴ 821.19-94 Ավետիսյան

ԳՄԴ 84 (5Հ) - 4

ISBN 978-9939-863-77-1

© Ավետիսյան Ջավեն, 2017

© «Արմավ» հրատարակչություն, 2017

ԵՐԿՈՒ ԽՈՍՔ

Ինձ ծանոթ մարդիկ ամեն անգամ հանդիպելիս, հարցնում են. «Դու կյանքի երկար ու ձիգ, դիպվածներով հարուստ ձանապարհ ես անցել, ինչո՞ւ այդ ամենը թղթին չես հանձնում»: Անկեղծ ասած, ուզում էի գրել, բայց ինչ-որ բան խանգարում էր. դա իմ մոռացկոտ հիշողությունն էր:

Մի գիշեր անքնության պատճառով, որ վերջերս ինձ հետ հաճախ է պատահում, սպասում էի ձանձրությից փրկող լուսաբացին: Այդպիսի պահերին մտքիս մեջ հայտնվում են անցած-գնացած դեպքեր, դեմքեր, որոնք դաջվել են հիշողությանս մեջ: Այդ օրը դրան գումարվեցին նաև հոգեբանական այն հարուցիչները, որոնք ընդունակ են արթնացնելու անհայտության դատապարտված մոռացված պահերը: Սրանք էին, որ եկան ամբողջացնելու նախաձեռնածս գործը:

Մի բան էլ կուզեի ասել իմ ծանոթ և անծանոթ ընթերցողներին. ես գրող չեմ, այլ՝ վավերագրող: Սա է հուշագրության ժանրի պահանջը, որին ամեն կերպ աջխատել եմ հավատարիմ մնալ:

Ջավեն Ավետիսյան

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

ՄԱՆԿՈՒԹՅՈՒՆ,
ՊԱՏԱՆԵԿՈՒԹՅՈՒՆ,
ԴՊՐՈՑԱԿԱՆ ՏԱՐԻՆԵՐ

ԻՄ ԱՄԵՆԱՀԵՌԱՎՈՐ ՀՈՒՇԸ

Երազի պես հիշում եմ. մայրս մի ափսե լիքը լոբով ձաշ էր դրել իմ առջև: Մի մեծ գդալով ուտում էի՝ բերանս, քիթս, շորերս ձաշոտելով: Այդ պահին հայրս մի անծանոթ մարդու հետ մտավ մեր տուն: Անծանոթը մոտեցավ ինձ ու հարցրեց.

– Այդ ի՞նչ ես ուտում, փոքրի՛կս:

Ասացի՝ բոբի: Այս խոսքի վրա հայրս, մայրս, նաև անծանոթը սկսեցին ծիծաղել, ես էլ հետները:

Դա ութսուներկու տարի առաջ էր:

Հիմա ինձ թվում է, թե երբեք փոքրիկ երեխա չեմ եղել, բայց եղել եմ, չէ՞...

ԱՍՏՂԵՐ ՀԱՇՎԵԼԻՍ

Հինգ, թե վեց տարեկան էի: Օրը մթնել էր: Մեր տան պատշգամբում նստած նայում էի աստղերով զարդարված երկնքին և, ցուցամատս երկինք պարզած, փորձում էի հաշվել աստղերը, բայց շփոթվում էի: Մայրս նկատելով՝ հարցրեց.

էդ ի՞նչ ես հաշվում:

– Աստղեր, – պատասխանեցի:

Նա գլուխս շոյելով՝ ինձ ասաց.

– Դու չես կարող հաշվել աստղերը, դրանք շա՛տ-շա՛տ են:

– Դո՞ւ էլ չես կարող, – հարցրեցի:

Նա պատասխանեց, որ ոչ ոք չի կարող: Դրանից հետո աստղեր հաշվելը թարգեցի, բայց մի ուրիշ անգամ, երբ օրը մթնել էր և աստղերը նորից շողշողում էին երկնքում, տեսա, որ դրանցից մեկը իր տեղից պոկվեց և հետևից լույս արձակելով՝ անհետացավ երկնքի հեռուններում:

Սա իմ մանկության տարիների աստղերի մասին առաջին տպավորությունն էր, որ մնացել է հիշողությանս մեջ:

ՆՈՐԻՑ ԵՐԿԼՔԻ ՄԱՍԻՆ

Ջինջ և անսահման կապույտ երկինքը իջել էր մեր տնից ոչ հեռու բլրի գլխին ու անշարժացել:

Մի օր որոշեցի բարձրանալ բլրի գագաթը և ձեռքով շոշափել այդ զարմանահրաշ կապույտը: Մորիցս թաքուն ծանապարհ ընկա: Մի սագ, իր դեղնավուն, փափլիկ ձտերով օրոր-շորոր անելով, հայտնվեց իմ առջև: Մայր սագը հենց որ ինձ տեսավ, թևերը բարձրացրեց և ֆշշալով վազեց դեպի ինձ: Ես վախից արագ ետ շրջվեցի և սկսեցի վազել: Ոտքս քարին կպավ, ընկա: Սագը կանգնեց իմ դիմաց, թևերը իջեցրեց և հերոսաբար քայլեց դեպի իր ձտերը: Երբ նրանք ինձնից հեռացան, վեր կացա, կաղալով վազեցի դեպի տուն: Ծունկս քերծվել էր, արյուն էր գալիս: Մայրս թթի թունդ օղիով մաքրեց ծունկս և սպիտակ շորով փաթաթեց:

Երկու օր անց որոշեցի նորից գնալ բլրի կողմը, այս անգամ զգուշանալով, ծանապարհը հետազոտելով: Ամեն ինչ անվնաս էր, ո՛չ սագեր կային, ո՛չ շներ: Հաջողությամբ հասա բլրի ստորոտին և սկսեցի բարձրանալ: Կապույտ հրաշքը դեռ տեղում էր, ու երբ մի քիչ էլ բարձրացա, այն արագ չքացավ բլրի գագաթից և բազմեց հեռավոր սարերի ուսերին: Այդ պահին ես հասկացա, որ հորիզոնի հետևից վազելն անիմաստ է: Սա իմ առաջին «գիտական հայտնությունն» էր, այդ մասին ինձ ոչ ոք ոչինչ չէր ասել: Փոխարենը մոտ ու հեռու շատ բաներ տեսա: Բլրի ետևում փոված տարածքում մի գյուղ տեսա: Այդ գյուղի տակով մի երկար ծանապարհ էր անցնում, ծանապարհին ուղեկցում էր արևից պսպղացող գետը: Լիքը գեղեցիկ թռչուններ տեսա՝ փոքրիկ թփերի ձյուղերին կանգնած: Մեկ-մեկ նստում էին իրար վրա՝ իրենց թևերը արագ-արագ թափահարելով: Իրար դոփող կրիաներ տեսա: Կանաչ և գորշ գույնի մողեսները, իրենց բներից դուրս գալով, արագ վազում էին այս ու այն կողմ: Գույնզգույն թիթեռներ տեսա. մեկ-մեկ իրար կպած կտրուկ շարժումներ անելով՝ սավառնում էին օդում: Մինչ այդ ես նման բաներ չէի տեսել:

ԱՆԾԱՆՈՔ ՄԱՐԴԻԿ

Մայրս տեղ պիտի գնար, և որպեսզի մենակ չմնամ, ինձ տարավ տատիկիս տուն: Տատիկս ու պապիկս առանձին էին ապրում՝ մեր տնից ոչ հեռու հին ժամի մոտ, որը կոմսոմոլները ակումբ էին սարքել. այդ մասին տատիկս էր ինձ ասել: Երբ մորս հետ մտանք տատիկենց տուն, մի նորածին գառնուկ տեսա՝ մաշված փալասների վրա նստած: Ես գրկեցի գառնուկին ու սկսեցի շոյել նրա գլուխը: Դա ինձ համար երջանիկ պահ էր. գառնուկին գրկել էի ու բաց չէի թողնում:

Օրը մթնում էր: Պապս վառեց նավթի լամպը և, դառնալով տատիկիս, ասաց.

– Սիրանո՛ւշ, էն շաքարից մի կտոր էրեխիս տուր:

Երբ տատիկս շաքարը տվեց, մոտեցրի գառնուկի բերանին: Ես գլուխը թեքեց, ուտելուց հրաժարվեց: Տատս ու պապս իրար մոտ նստած լուռ նայում էին ինձ ու չէին ժպտում: Այդ պահին, առանց դուռը ծեծելու, ներս մտան երկու անծանոթ մարդիկ: Երանցից մեկը վերնաշապիկի գրպանից մի թուղթ հանեց, ցույց տվեց պապիկիս ու ասաց.

– Արշա՛կ, շորերդ հավաքի:

Պապս, առանց հալոուհարց լինելու, շորերը հագավ: Անծանոթները, պապիկիս թևերը բռնած, նրան տնից դուրս տարան: Տատիկս նրանց ետևից գոռաց.

– Ո՛ր եք տանում, ա՛յ անաստվածներ:

Երանք չարձագանքեցին: Տատիկս ծնկներին խփելով՝ լաց էր լինում:

– Ո՛ր տարան պապիկին,– հարցրեցի նրան:

– Բանտ,– պատասխանեց:

Տատիկիս հարցրի.

– Բանտն ի՞նչ է:

Ասաց.

– Կմեծանաս, կիմանաս:

– Տատի՛կ,– ասացի,– որ մեծանամ, ինձ էլ ե՞ն բանտ տանելու:

Տատիկս ասաց.

– Աստված հեռու պահի քեզ բանտից, բանտը չարչարանքի տեղ է:

– Պապիկին էլ ե՞ն չարչարելու:

Տատիկս լուց ու այլևս հարցերիս չպատասխանեց:

Երբ երկրորդ դասարանի աշակերտ էի, մորաքույրս պատմեց, որ իր ամուսինը այդ օրերին ղաչաղ էր դարձել, սար ու ձոր ընկել, և որ նրան դասակարգային թշնամի են անվանել: Այդքանը չհասկացա: Մորաքրոջս հարցրի՝ բա պապիկին ինչո՞ւ բանտարկեցին: Լա ասաց, թե պապիկը ուրիշների աչքից թաքուն իր ամուսնուն հաց է տարել, գյուղացիներից մեկը, մուրազը նրա փորում մնա, այդ մասին գյուղսովետին տեղյակ էր պահել: Դրա համար են պապիկին բանտարկել:

ՏՈՆԱԾԱՌ ԶԱՆ, ՏՈՆԱԾԱՌ

Հունվարի մեկն էր: Ես ու քույրս որոշեցինք մեր տանը տոնածառ դնել, բայց ո՛չ եղևնու ծառ ունեինք, ո՛չ էլ տոնածառի խաղալիքներ: Մեր տան ցախանոցից մի հարմար ձյուղ վերցրինք, դժվարությամբ կանգնեցրինք մեր տան փոքրիկ սեղանին և սկսեցինք բամբակ փաթաթել ձյուղի շիվերին՝ իբր դրանց վրա ձյուն է նստել: Քույրս մի տիկնիկ ուներ, որ իր միակ խաղալիքն էր: Որոշեցինք այդ տիկնիկը դարձնել ձմեռ պապ: Այստեղ էլ բամբակը մեզ օգնեց: Բամբակի հաստ շերտով փաթաթեցինք տիկնիկին, գլխին բամբակե գլխարկ դրինք, տիկնիկի քթի տակ բամբակից բեղեր փակցրեցինք, ծնոտին՝ նույն բամբակից մորուք: Երբ այս ամենը հաջողությամբ ավարտեցինք, սովորաթուղթը կարմիր մատիտով ներկեցինք, դրանից աստղ սարքեցինք ու տեղավորեցինք տոնածառի գագաթին:

Կանգնել, նայում էինք մեր զարդարած տոնածառին, որ շատ հավանեցինք: Երբ մայրս մոտեցավ մեզ, հարցրեց.

– Իսկ ո՞ր են ձեր խաղալիքները, – լավ իմանալով, որ խաղալիք չունեինք:

Լա մտավ մեր մառանը, այնտեղից տանձ, խնձոր բերեց, նաև մի քանի գազար:

– Հիմա սրանց կոթերից թել կապեք և կախեք տոնածառից:

Հաջողությամբ դա էլ արեցինք:

– Իսկ գազարը ո՞նց կապենք, – հարցրի մորս:

Մայրս լուցկու հատիկների ծայրերը դանակով սրեց, խրեց գազարների մեջ, թելեր կապեց ու ինքն էլ իր ձեռքով կախեց տոնածառից: Սա

իսկ և իսկ մեր երազած տոնածառն էր: Մեր ուրախությանը չափ չկար: Ես ու քույրս իրեր ձեռք բռնած պտտվում էինք տոնածառի շուրջն ու երգում՝ տոնածառ ջան, տոնածառ: Այդ օրը, ով մտնում էր մեր տուն՝ մեր նոր տարին շնորհավորելու, քույրս ու ես իրար ձեռք էինք բռնում, տոնածառի շուրջը պտտվում ու երգում՝ տոնածառ ջան, տոնածառ:

ՏԱՏԻԿԻՍ ԽՈՐԱՄԱՆԿՈՒԹՅՈՒՆԸ

Վեց տարեկանից սկսած ամեն ամառ տատիկիս հետ սար էի գնում: Երբ կովերը արոտավայրից վերադառնում էին, տատս կովերը կթում էր, կաթը լցնում էմալապատ թասերի մեջ, տեղավորում մահձակալի տակ, որ արաժանը (սերը) հավաքվի կաթի երեսին: Ես արաժան շատ էի սիրում: Ամեն անգամ, երբ տատիկս կաթի սերը քաշում էր, ափսես մոտեցնում էի նրան ու ասում՝ լցրու:

– Այ բալա, – ասում էր տատիկս, – որ ամեն օր քեզ արաժան տամ, ինչո՞վ պիտի խնոցի հարեմ, կարագ սարքեմ:

Բայց ես համառում էի: Մի օր նկատեցի, որ տատիկս արաժանը քաշելիս շերեփը խոր է տանում՝ արաժանին կաթ խառնելով: Նա ափսեսն դրեց իմ առջև և օդայից դուրս եկավ՝ հորթերին արոտավայր քշելու: Արաժանի տեսքն ինձ դուր չեկավ, ցուցամատս մտցրի ափսեի մեջ և տեսա, որ մատիս վրա արաժանի հետք չկա, հիմնականում կաթ էր: Երբ տատիկս եկավ, մտավ օդան, ցուցամատս տնկած սկսեցի զոռալ: Տատս գլխի ընկավ, թե բանն ինչ է, ոտքերը գետնին խփելով՝ սկսեց բարձրաձայն ծիծաղել: Հարևան օդայից Սեփոանց տատիկը ներս մտավ:

– Աղջի Սիրանո՞ւշ, էդ ինչ ես ոտքերդ գետնին խփելով քրքջում:

Տատս ասաց.

– Հլա նրա մատին նայիր:

Նայեց, ինքն էլ գլխի ընկավ ու, տատիկիս դիմելով, ասաց.

– Ա կծիպի մեկը, արդեն մեծ տղա է, ամեն ինչ հասկանում է:

Ասաց ու ինքն էլ ծիծաղեց:

Նոր սկսել էի դպրոց հաճախել: Ճանապարհը անցնում էր Սեփոանց տան մոտով: Սեփոանց տատիկը ցախավելով սրբում էր իրենց տան

բակը: Հենց որ ինձ նկատեց, ցախավելը ցած դրեց, մոտեցավ, սիրալիր համբուրեց ձակատս և կատակելով ասաց.

– Տատիդ շերեփը հիշո՞ւմ ես:
Ես գլխով արի:

ՅԼԱՄԱՐՏԸ

Աբազլու կոչվող սարը երկու թաղամաս ուներ: Մի թաղամասում կոլտնտեսության կթվորներն էին ապրում, մյուսում՝ անհատները, կամ ինչպես իրենք էին ասում՝ մեկականները: Ամռանը սարը լցվում էր երեխաներով: Տարբեր խաղեր էինք խաղում, բոլորն էլ հետաքրքիր էին, բայց երբ կոլխոզի ցլերը սկսում էին կռվել, ամեն ինչ թողած նրանց էինք նայում: Կոլտնտեսությունը երկու ցուլ ուներ, որ սիրահետում էին և՛ կոլխոզի, և՛ մեկականների կովերին: Յլերը ժամանակ առ ժամանակ կռվում էին: Կռիվը բավականին երկար էր տևում: Աչքերը կարմրած պոզահարում էին իրար՝ ձակատ ձակատի խփելով: Յլերից մեկի անունը Սիդրուշ էր, մյուսինը՝ Մաքսիմ: Յլամարտը սկսելուց առաջ ամեն երեխա իր ցուլն էր ընտրում, ինչպես ֆուտբոլի սիրահարները: Ձակատամարտի ընթացքում գոռում-գոչում էինք.

– Սիդրո՛ւշ, հուպ տո՛ւր, Մաքսի՛մ, հուպ տո՛ւր:

Լինում էին պահեր, երբ ցլերը ձակատները մոտեցնում էին իրար և մի պահ դադարեցնում կռիվը՝ հավանաբար հոգնում էին, հետո անսպասելիորեն պոկվում էին իրարից, և կռիվը ավելի էր թեժանում: Մռնչում էին, քթներից փրփուր էր թափվում: Մի երիտասարդ հովիվ մոտեցավ մեր խմբին և սկսեց մեկնաբանել կռվի պատճառը: Կռվին հետևող երեխաներից մեկը, որ մեզնից համեմատաբար մեծ էր, նրան դիտողություն արեց, ասելով.

– Մի՛ խանգարիր, մենք էդ մասին բոլորս էլ գիտենք:

Հովիվը նեղացկոտ նայեց մեզ և սկսեց քայլել օդաների կողմը:

– Սիդրո՛ւշ, հուպ տո՛ւր, Մաքսի՛մ, հուպ տո՛ւր:

Երեխաներիս աղմուկը գնալով շատանում էր: Սիդրուշը, պոզերը ցցած, ուժեղ հարվածեց Մաքսիմի փորին. քիչ էր մնում ընկներ, բայց նորից մարտական դիրք ընդունեց և շարունակեց կռիվը: Սիդրուշը գլուխը մտցրեց Մաքսիմի փորի տակ և ուժեղ խփեց նրա ամորձինե-

րին: Լա ցավից մոնչաց և լքեց մարտի դաշտը: Սիդրուշը կանգնել ու հաղթական մոնչում էր նրա ետևից: Լա նվաճել էր բոլոր կովերին սիրահետելու իրավունքը: Կանգնած մեզ էր նայում խստաշունչ հայացքով, երևի մտքում ասում էր՝ էս լակոտները ինչի՞ են հավաքվել էստեղ:

Տարիներ հետո ցլերին փոխարինեցին սպիտակ ֆարթուկներ հագած անասնաբույժները, որոնք արհեստականորեն բեղմնավորում էին կովերին՝ կուլբաներով, սրվակներով զինված: Գիտատեխնիկական առաջընթացը սկսվել էր, սարերում ցուլ չմնաց, բոլորին քշեցին Կիրովականի սպանդանոց:

ԿՈՒՎ-ԿՈՒՎԸ

Հայրենական պատերազմի առաջին տարին էր: Մեր ավանդական խաղերին՝ ցիցեռնակին, հլին-հլինին ավելացավ նաև փայտից սարքած հրացաններով կովելը:

Սարերում էինք: Կովողներս բաժանվեցինք երկու խմբի: Մի խմբի զինվորները կարմիր բանակայիններ էին, մյուսինը՝ ֆաշիստներ: Ես հայտնվել էի կարմիր բանակայինների խմբում, այն էլ հրամանատարի դերում: Որոշեցինք նաև դրոշակներ ունենալ: Կարմիրներս թղթե դրոշակի վրա աստղ էինք նկարել, մյուս խումբը՝ ֆաշիստական սվաստիկա: Դրոշակները փակցրել էինք երկար փայտերի ծայրին և դիրքավորվել: Ֆաշիստները պարտադիր պիտի պարտվեին՝ պայմաններից մեկն էլ դա էր: Թաքնվելով առատ խոտերի ու ծաղիկների մեջ, ժամանակ առ ժամանակ պառկած տեղից բարձրանում էինք՝ մեր փայտե հրացանները ուղղելով ֆաշիստների կողմը: Հենց որ մեկը գլուխը բարձրացնում էր, պո՛ւ էինք անում ու ասում. «Քաջի՛կ, դու սպանվեցիր, Աշո՛տ, դու սպանվեցիր, Ջուլա՛լ, դու սպանվեցիր, և այդպես շարունակ»: Երբ կարմիրներս հաղթում էինք ֆաշիստներին՝ հրացաններն առած վազում էինք դեպի պարտվածների դիրքերը:

Ֆաշիստների դիրքերում երկու ողջ մնացած զինվոր էր մնացել: Գերի մնացածներին տանում էինք մոտակա ձորը, որ գնդակահարենք: Հենց որ պո՛ւ էինք անում, նրանք ընկնում էին: Ֆաշիստների խմբից մեկը սկսեց աղմկել՝ ասելով. «Կռիվն արդար չէ, ինչո՞ւ դուք պիտի կարմիրներ լինեք, մենք՝ ֆաշիստներ»: Հարցի պատասխանը գտանք՝ որո-

շեցինք վիճակ հանել. նոր երկու խումբ ձևավորվեց: Կուլի ընթացքում փոխադարձաբար կրակում էինք իրար: Կարմիրներից էլ էին զոհվում, ֆաշիստներից էլ: Հետո, երբ կռիվը վերջացավ, պարզվեց, որ խմբերից ոչ մեկը չէր հաղթել: Տղաներից մեկն ասաց.

– Կարմիրները պիտի հաղթեին, չէ՞:

Անհեթեթ վիճակի մեջ հայտնվելուց հետո, կռիվ-կռիվը թարգեցինք և անցանք մեր ավանդական խաղերին...

Սարաշխարհում խաղաղություն տիրեց:

ՍԱՄԱԼՅՈՒՏ, ՍԱՄԱԼՅՈՒՏ, ՆԱՄԱԿ ԳՑԻ՛

Հայրենական պատերազմը շարունակվում էր: Մեր սարերի վրայով մեկ-մեկ ինքնաթիռ էր թռչում: Ինքնաթիռ բառի իմաստը չգիտեինք, փոխարենը սամայոտ էինք ասում: Հենց որ էս սամայոտը երևում էր սարի գլխին, մեջքով պառկում էինք խոտերի վրա ու կանչում.

– Սամայո՛տ, սամայո՛տ, իմ հորից նամակ գցի՛:

– Սամայո՛տ, սամայո՛տ, իմ մեծ եղբորից նամակ գցի՛:

– Սամայո՛տ, սամայո՛տ, իմ հորեղբորից նամակ գցի՛:

Մի օր էլ, որ այդ նույն սամայոտը հայտնվեց մեր սարի գլխին, նորից կրկնեցինք մեր պահանջները: Էդ պահին մեր երեխաներից մեկը մի ուրիշ բան էր խնդրում.

– Սամայո՛տ, սամայո՛տ, փող գցի՛, փող գցի՛...

Չարմացած հարցրինք նրան.

– Ինչո՞ւ չես քո հորից նամակ խնդրում. ուրիշ բան ես ասում:

– Բա ի՞նչ ասեմ,– պատասխանեց մեր սարվոր ընկերը,– Հիտլերը իմ հորը սպանել ա, սև թուղթը եկել ա, տանն էլ փող չունենք, որ հաց առնենք:

ԲԱԲՈՅԻ ՍԱՐԳԻՍԸ

Սարգիսը բաբոյի տղան էր՝ մոտ քառասուն տարեկան: Արմատներով մեր գյուղացի էր, ընտանիքով Թիֆլիսում էին ապրում, բայց ամեն ամառ գալիս էին գյուղ՝ հանգստանալու: Սարգսի կինը ռուս էր՝ կլտպլ-

տալով հայերեն էր խոսում: Սարգիսը մի տղա ուներ, անունը՝ Արտուշ-
ա, որին մենք Արտուշ էինք ասում: Նա միշտ կարճ շավվար էր հագնում,
տնից համարյա դուրս չէր գալիս: Իրենց տան պատշգամբում խաղում
էր քաղաքից բերած Խալուշկա անունով շան հետ: Սարգսի կինը հագ-
վադեպ էր գյուղ գալիս, հավանաբար ամառները աշխատում էր: Սար-
գիսենց տունը մեր գյուղի ներքին թաղի աղբյուրի մոտ էր, դրա համար
էլ խմելու ջրի պակաս չունեին: Երեխեքով կանգնում էինք Սարգիսենց
տան դիմաց ու կանչում:

– Արտո՛ւշ, Արտո՛ւշ, արի՛ խաղանք, գնանք գետում լողանանք, ձուկ
բռնենք, ի՞նչ ես կպել էդ շանը:

Սարգիսին չէին թողնում: Բաբոն գյուղի բարբառով Սարգիսին դի-
տողություն էր անում՝ ասելով.

– Ա՛ տղա, խի՞ չես էդ ըրելիս թողնում գնա գյուղի էրեխանց հետ
խաղա, կարգին տղա դառնա:

Երեխաներով սովորություն ունեինք իջնելու մեր գյուղից ոչ այնքան
հեռու գետը՝ մեր ձեռքով սարքած կարթով ձուկ բռնելու: Հազվագյուտ
էր պատահում, որ էդ կարթով կարողանում էինք ձուկ բռնել: Մի օր լսե-
ցինք, որ Սարգիսը մի քանի օրով գնացել է Թիֆլիս: Նաև լսեցինք, որ
նա քաղաքից «Ֆարրիչնի» կարթեր է բերել, հատը մի ձու, վաճառում է:
Մեր տներից թաքուն ձու էինք փախցնում, նրանից կարթ առնում: Ահա-
գին ձուկ էինք բռնում: Մի օր մի տոպրակ լիքը ձուկ Սարգիսին նվեր
տարանք: Նա պատշգամբից մտավ տուն, մի տուփ կարթ բերեց, դրեց
սեղանին ու ասաց.

– Վերցրեք ինչքան ուզում եք: Էս կարթը ատամներ ունի, որ ձուկը
կուլ է տալիս, կարթը մնում է բկում:

Էդ տուփից ամեն մեկս երկուական կարթ վերցրինք, գոհ և ուրախ
գնացինք մեր տները:

Հաջորդ առավոտ երեխեքով մոտեցանք Սարգսի տանը: Բաբոն տան
պատշգամբում վազքի շորեր էր փռում: Բաբոյին խնդրեցինք, որ Արտուշ-
ին թողնեն մեզ հետ գա, իրար հետ գնանք ձուկ բռնենք: Բաբոն ասաց.

– Նրան հետներդ տարեք, ձուկ բռնել սովորեցրեք:

Իջանք գետի ափ: Արտուշի համար կարթի կոթ սարքեցինք, թելով
կապեցինք և տվինք իրեն: Նա իր գրպանից մի կարթ հանեց և կապեց
թելի ծայրին: Երբ վերադարձանք գյուղ, մտանք Սարգիսենց պատշ-
գամբ, Արտուշը իր բռնած ձուկը, որ քիչ չէր, ձկնորս տղամարդու պես

դրեց իրենց սեղանին: Սարգիսը տնից դուրս եկավ, զարմացած նայեց Արտուշին:

– Էս դո՞ւ ես բռնել:

Արտուշը լուրջ-լուրջ ասաց՝ այո՛:

Բաբոն արագ արձագանքեց և Սարգսին նայելով՝ ասաց.

– Բա որ քեզ ասում եմ էս ըրեխիս բաց թող տնից: Տեսնում ես չէ՞, որ իսկական տղամարդ տղա է դառնում:

Սարգիսը շոյեց Արտուշի գլուխը, ապա շրջվելով մեր կողմն՝ ասաց.

– Երեխե՛ք, ուր էլ գնաք, Արտուշին հետներդ տարեք:

ԵՍ ԱՌԱՋԻՆ ԴԱՍԱՐԱՆՑԻ ԵՄ

Սեպտեմբերի 1-ից մի քանի օր առաջ մերոնց տեղյակ էին պահել, որ իմ անունը արդեն գրված է առաջին դասարանի մատյանում: Եկավ սեպտեմբերի 1-ը, մայրս շորերս լվացել, արդուկել էր. հագնվեցի, մազերս սանրեցի, և մորս ձեռքից բռնած գնացի դպրոց: Դպրոցի տնօրենը մեզ ասաց, որ առաջին դասարանցիները սովորելու են ոչ թե այս շենքում, այլ սրանից քիչ հեռու գտնվող Գուլակյանների ազատ բնակարաններից մեկում: Գնացինք ասված տեղը: Երեխաները իրենց ծնողների հետ հավաքվեցին այդ տան բակում: Երեխաներից ոմանք լաց էին լինում, նրանց համար դպրոցը անսովոր վայր էր: Նախատեսված սենյակից դուրս եկավ մեր ուսուցչուհին՝ ընկեր Մարուսը, ով մի բարի, ժպտերես կին էր: Նա լացող երեխաների գլուխները շոյեց, նրանց ականջին ինչ-որ բան ասաց, դադարեցին լացելուց: Լսվեց զանգի ձայնը: Դա մեր գյուղի հին ժամի զանգն էր, որի ձայնը տարածվում էր ամբողջ գյուղով մեկ: Ուսուցչուհին մեզ տարավ ներս և ցույց տվեց, թե ով որտեղ է նստելու: Դասասենյակի՝ ուղիղ մեր դիմացի պատից կախված էր մի սև գույնի գրատախտակ: Կողքին մի մեծ հաշվիչ կար դրված: Սրանք մեզ համար անսովոր բաներ էին: Ուսուցչուհին յուրաքանչյուրիս մեկական այբբենարան տվեց և ասաց, որ դա նախորդ առաջին դասարանցիների դասագրքերն են: Նաև ասաց, որ այս գրքով մենք սովորելու եք գրել-կարդալ: Ասաց նաև, որ մենք, բացի կիրակի օրվանից, ամեն օր հաճախելու ենք դպրոց: Ուրիշ բաներ էլ ասաց, որ հիմա չեմ հիշում: Սուս ու փուս հետևում էինք ընկեր Մարուսի ասածներին:

ԲՈՎԱՆ ԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Երկու խոսք 3

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

ՄԱՆԿՈՒԹՅՈՒՆ, ՊԱՏԱՆԵԿՈՒԹՅՈՒՆ, ԴՊՐՈՑԱԿԱՆ ՏԱՐԻՆԵՐ

| | |
|---|----|
| Իմ ամենահեռավոր հուշը | 6 |
| Աստղեր հաշվելիս | 6 |
| Նորից երկնքի մասին | 7 |
| Անծանոթ մարդիկ..... | 8 |
| Տոնածառ ջան, տոնածառ..... | 9 |
| Տատիկիս խորամանկությունը | 10 |
| Ցլամարտը | 11 |
| Կռիվ-կռիվը | 12 |
| Սամայոտ, սամայոտ, նամակ գցի..... | 13 |
| Բաբոյի Սարգիսը | 13 |
| Ես առաջին դասարանցի եմ..... | 15 |
| Զգուշավոր տատիկս..... | 16 |
| Դժբախտ Վարսենիկը | 18 |
| Մեր գյուղի Վանիչի դատը | 19 |
| Վանիչի կատակներից | 21 |
| Էշերի հոգեբանը | 21 |
| Մեր գյուղի գինեկոլոգ Ճուլիկը | 22 |
| Այն մասին, թե ինչպես փրկեցին ինձ գետում խեղդվելուց..... | 24 |
| Փորագրություններ հաճարի ծառի կեղևներին..... | 26 |
| Ճնձղուկների որսը | 27 |
| Մեր գյուղի ջրաղացն ու ձիթանքը | 28 |
| Թուրքի շունը..... | 31 |
| Սարբաշն ու Փալաշը..... | 32 |

| | |
|--|----|
| Անքարեցի տրակտորիստ Լիպոն..... | 33 |
| Ակյուռի շտեմարանը | 34 |
| Նորից պանրի մասին | 35 |
| Երկու պատմություն իմ պապ Տեր Սահակի և գյուղագիր Ճուղուրյանի մասին | 37 |
| Կանուշ հոքիրը | 40 |
| Սերգո ամու անսպասելի պայմանը | 41 |

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

ԴԵՊԻ ԵՐԿԻՆՔ

| | |
|---|----|
| Իմ անբեկանելի որոշումը..... | 44 |
| Հայրս ինձ ծանապարհում է դեպի օդաչուական ուսումնարան | 45 |
| Ընդունելության քննություններից հետո..... | 47 |
| Տոպոգրաֆիայի դասախոսը | 47 |
| Կլիստրոնը | 49 |
| Ես վալս եմ պարում..... | 50 |
| Իմ առաջին պարաշյուտային թռիչքը | 51 |
| Ստարշինա Չուբախան | 54 |
| Իմ առաջին թռիչքը հրահանգչիս հետ | 56 |
| Ինքնուրույն թռիչքներից առաջ | 58 |
| Մեր առաջին թռիչքային պրակտիկայի քննությունը..... | 59 |
| Առաջնորդի մահը..... | 60 |
| Արձակուրդից հետո..... | 61 |
| Վայ, քո մերը... .. | 63 |
| Տեսածս առաջին ողբերգական վթարը | 64 |
| Իմ համագյուղացի Բաղդո Մատինյանը | 65 |
| Տկևան և Պրոխան | 67 |
| Ավիացիոն փոստատարը | 68 |
| Անսպասելի ուղևորություն դեպի Չեռնիգով..... | 70 |
| ՄիԳ-17-ը | 72 |

| | |
|---|-----|
| Օդային մարտ..... | 74 |
| Իմ ընկեր Սաշա Բարոնինը | 74 |
| Մայրը | 77 |
| Իմ հանդիպումը Միգ-ի կոնստրուկտոր Արտեմ Միկոյանի հետ | 79 |
| Հրաժեշտի մաղթանքներ | 81 |
| Վարսավիրի դիտողությունը | 83 |
| Օտար ավերում ծվարած Արսենը..... | 84 |
| Հանդիպում Լևոն Աբգարի Օրբելու հետ..... | 86 |
| Հանդիպում մի հրեա ընտանիքի հետ | 87 |
| Մի անակնկալ լուր հեռախոսով..... | 91 |
| Մայրը Իխսանգալիևը..... | 95 |
| Խփնվածը | 96 |
| Նորավարտ վրացի օդաչուի անհեթեթ հայտարարությունը..... | 97 |
| Երբ հասունացել էր մարդ սպանելու ժամանակը | 99 |
| Իմ վերջին թռիչքը | 100 |
| Մի փոքրիկ պատմություն տիեզերագնաց Գերման Տիտովի մասին..... | 103 |

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

ԿՅԱՆՔԸ ՍԿՍՎՈՒՄ Է ՆՈՐԻՑ

| | |
|---|-----|
| Դարձ | 106 |
| Երբ եկավ սեպտեմբերը | 107 |
| Հանդիպում հոչակավոր դերասան Փափազյանի հետ | 110 |
| Մի անսպասելի նամակ | 112 |
| Հայրս և իր փայփայած գառը..... | 113 |
| Հավատի զորությունը | 113 |
| Սևից սպիտակ հանող Սուրիկը | 114 |
| Հայրս՝ մենակյաց | 115 |
| Անսպասելի կարծիք իմ ավարտական աշխատանքի մասին | 117 |
| Թե ինչպես դիմավորեցինք Վորոշիլովին | 119 |

| | |
|---|-----|
| Հանդիպում Բուլատ Օկուջավայի հետ | 120 |
| Ակադեմիայի թղթակից անդամի ընտրությունը | 124 |
| Յուրա Փանյանի ծոցատետրային գրառումները | 124 |
| Կարոտի կանչը | 128 |
| Հանդիպում Երվանդ Քոչարի հետ | 129 |
| Մի անգամ Ծաղկաձորի անտառում | 131 |
| Չուզելս ստացվեց | 133 |
| Մեր տան առջևի փոքրիկ այգին | 134 |
| Չտեսը | 134 |
| Նորօրյա շնիկով տիկինը | 136 |
| Երկու շնորհավորանք | 137 |
| Իմ ցավը | 138 |
| Ավետիսյանների տոհմի պատմությունից | 139 |
| Մի անգամ Տաշքենդում | 141 |
| Մի չքնաղ երազ | 143 |
| Մտորումներ Հայաստանի անկախության և | |
| Սպիտակի երկրաշարժի մասին | 144 |
| Եհովականների մայթը | 148 |
| Խոնարհվող ծառը | 149 |
| Ուղևորություն դեպի Գերմանիա | 151 |
| Փոքր տղաս՝ Վահեն | 153 |
| Թե ինչ ասաց մեզ Ռուբեն Մելիքը | 155 |
| Մեղալների, շքանշանների հեղեղ Հայաստանում | 156 |
| Մտահոգություն՝ կապված բնապահպանության հետ | 157 |
| Մի ժամանակ այսպիսին էր սրձարանը | 159 |
| Խորհրդային տարիների աշխատավարձը | 160 |
| Չանգվածային ցույց | 161 |
| Այցելություն Արևմտյան Հայաստան | |
| (տղայիս՝ Վահեի պատմածից) | 162 |
| Մի քանի տեղեկություններ Անի քաղաքի մասին | 163 |

ԳԼՈՒԽ ԶՈՐՐՈՐԴ

ԳՐԱԿԱՆ ԴԻՄԱՆԿԱՐՆԵՐ

| | |
|-------------------------------|-----|
| Հովհաննես Ծիրազ..... | 166 |
| Մկր Մկրյան..... | 168 |
| Արամ Ինձիկյան..... | 170 |
| Էդվարդ Ջրբաշյան..... | 172 |
| Հրանտ Թամրազյան..... | 174 |
| Արամ Գրիգորյան..... | 176 |
| Սուրեն Աղաբաբյան..... | 177 |
| Սերգեյ Սարինյան..... | 178 |
| Ռաֆիկ Հարությունյան..... | 179 |
| Սեդա Ալեքսանդրովնան..... | 180 |
| Լևոն Տեր-Պետրոսյան..... | 182 |
| Վանո Սիրադեղյան..... | 184 |
| Նկարիչ Սեյրան Խաթամաշյան..... | 186 |

ԳԼՈՒԽ ՀԻՆԳԵՐՈՐԴ

ՈՒՇԱՅԱԾ ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ

| | |
|---|-----|
| Բանաստեղծություններ հոգու և հավատի..... | 190 |
| Ամերիկահայ պատանին փնտրում է իր նախնիների երկիրը..... | 196 |
| Խոսքեր և խորհուրդներ..... | 206 |

ՉԱՎԵՆ ՎԱՍԻԼԻ ԱՎԵՏԻՍՅԱՆ

(բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր)

Ծնվել է 1933թ. նոյեմբերի 16-ին Իջևանի շրջանի Խաջթառակ գյուղում: Ավարտել է գյուղի 7-ամյա և Իջևանի միջնակարգ դպրոցները:

1951թ. ընդունվել և ավարտել է Կրեմենչուգի և Չուգուևի (Ուկրաինա) կործանիչային ավիացիայի օդաչուական ուսումնարանները: Ավարտելուց հետո ծառայել է Լենինգրադի հակաօդային պաշտպանությունում իբրև ավագ օդաչու:

Առողջական վիճակը վատթարանալու պատճառով 1958թ. զորացրվել և նույն թվականին ընդունվել է Երևանի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետը:

1963թ. համալսարանը ավարտելուց հետո ընդունվել է Մանուկ Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի ասպիրանտուրան: Այստեղ պաշտպանել է թեկնածուական և դոկտորական ատենախոսություններ:

Ինստիտուտի տեսության բաժնում աշխատելու ընթացքում, համատեղության կարգով դասախոսել է նաև Երևանի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետում:

ՀԵՂԻՆԱԿԵԼ Է ՀԵՏԵՎՅԱԼ ԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

- «Թումանյանի ստեղծագործական լաբորատորիան» Եր., 1984թ.,
- «Գեղարվեստական մտածողության հետքերով», Եր., 1985թ.,
- «Մարդը Ե դարի գրականության մեջ», Անթիլիաս, (Լիբանան), 1985թ.,
- «Հայ պատմավեպի պոետիկան», Եր., 1986 թ.,
- «Խորենացին մշակույթի գիտակցության մեջ», Եր., 2001թ.,
- «Նորագույն գրականության զարգացման միտումները», Եր., 2003թ.,
- «Նարեկացու Մատյանը», Եր., 2006 թ.,
- «Հնի և նորի զուգահեռներում», Եր., 2000թ.,
- «Գրողի ստեղծագործական հոգեբանության հարցեր», Եր., 2011թ.,
- «Ե դարի պատմագրության տիպաբանությունը», Եր., 2013 թ.:

ԲՈՒՀԱԿԱՆ ԴԱՍԱԳՐՔԵՐ

«Գրականության տեսություն», Եր., 1998թ.,
«Տեքստաբանության մեթոդական ուղեցույց», Եր., 2000թ.,
«Տեքստաբանություն», բուհական դասագիրք, Եր., 2008թ.:

ԴՊՐՈՑԱԿԱՆ ԴԱՍԱԳՐՔԵՐ

«Հայ գրականություն 7-րդ դասարանի համար», Եր., 1993թ.,
«Հայ գրականություն 7-րդ դասարանի համար» (նոր ծրագրով), Եր.,
1998թ.,
«7-րդ դասարանի գրականության դասագիրք (նոր ծրագրով), Եր., 2001թ.,
«Գրականություն 8-րդ դասարանի համար», Եր., 2007թ.,
«Գրականության դասագիրք 11-րդ դասարանի համար», Եր., 2010թ.,
նույնը վերանայված, Երևան, 2015թ.:

ԱԹՈՂՈԳԻԱՆԵՐ, ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ԵՎ ՄԱՍՍԱՅԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

«Մարգարիտներ հայ քնարերգության», 2-րդ հատոր, 1974,
«Armeninne entologie, Paris, 1973»,
«Թումանյանի հոբելյանական քառահատորը», Եր., 1969թ.,
Հովհաննես Ծիրազ «Ընտրանի», Եր., 2002թ.,
«XX դարի հայ պոեզիան», Եր., 2005թ.:

Դ. Դեմիրձյանի գիտական հրատարակության 11, 12-րդ հատորները. Եր.,
1985թ.:

Հայ և ռուս գրական և հասարակական մամուլում հրատարակվել է 100-ից
ավելի հոդվածներ:

Մասնակցել է գրականության տեսության խնդիրներին վերաբերող յոթ
կոլեկտիվ մենագրությունների ստեղծմանը 1990-2010թթ.:

ՉԱՎԵՆ ԱՎԵՏԻՍՅԱՆ

ՀԵՌԱՑՈՂ ՀՈՐԻԶՈՆՆԵՐ

ЗАВЕН АВETИCЯН

УХОДЯЩЕЕ ГОРИЗОНТЫ

*Հրատարակչության տնօրեն՝ Արմինե Քոչարյան
Խմբագիր՝ Արմեն Ավանեսյան
Ձևավորումը՝ Արշալույս Արզումանյանի*

Չափսը՝ 60x84 1/16
Թուղթը՝ օֆսեթ 80գ/մ²
Ծավալը՝ 14.5 տպ. մանուկ
Տպաքանակը՝ 300
Տառատեսակը՝ Ghabuzian Tigran
Գինը՝ պայմանագրային
Տպագրվել է «Նովել» տպագրատանը



издательство АРМАВ

Ք. Երևան, Շիրազի 24 շ. 48 բն.
հեռ.՝ 34-73-35
էլ.փոստ՝ armav-hrat@mail.ru

Г. Ереван, ул. Шираза 24 д. 48 кв.
тел.՝ +374-10-34-73-35
Email: armav-hrat@mail.ru